

“ Լսա ախտերէն երբոր սրբուի, այն ատեն կ'առնեն զինքը Գիտութեան և ուրիշ առաքինութեանց բնակարանը կը տանին . և այս առաքինութիւններն են Զօրութիւն, Արդարութիւն, Բարեխառնութիւն, Չափաորութիւն, Աղապտութիւն, Ժողովալութիւն և Քաղցրութիւն, որոնք ճանապարհորդը իրենց մօրը Երջանկութեան կ'առաջնորդեն, որն որ, ինչպէս կը տեսնէք, տարիքը առած՝ բայց վայել չաղէմ կ'ին մըն է, զգեստները վայելուչ՝ սակայն առանց ցուցամոլ շոյալութեան բարձր աթոռի մը վըայ նստած ու ծաղկեայ պսակ մը գլուխը դրած : Երբոր ճանապարհորդը իր քովը գայ, դատերացը հետ մէկտեղ կ'ելլէ զինքը կը պսակէ, ինչպէս մենք պատերազմներու մէջ կտրիճ՝ ելլող ախոյեանը կը պսակենք . վասն զի ինքն ալ մեծամեծ թըշնամեաց յաղթած է, որոնց ոյժը ամէն գազաններուն ունեցածէն աւելի, և զօ-

րութիւնը զամէնքը կ'ահաբեկէ . և ահաւասիկ ինքը այն թշնամիները ոտքի տակ առած և գերութեան շղթաներով պարաւանդած է . տգիտութիւնը, ցաւը, անբարեխառնութիւնը, ագահութիւնը, և ասոնց նման ուրիշ բազմաթիւ կըբեր : Լսկէ ետքը իրեն առաջնորդ առաքինութիւնները կը տանին զինքը իր առջի տեղը, և անկէ բոլոր մահկանացուք և անոնց մոլորութիւններն, ախտերն ու թշուառութիւնները ու բազմազգի նաւաբեկութիւնները կը ցուցնեն, և թէ ինչպէս խեղճերը իրենց թշնամեաց ձեռքը խաղալիկ եղած մոլորաշաւիղ կը թափառին, շղթայից ծանրութիւնը կը զգան ու չեն կրնար խորտակել, երջանկութեան ճամբան անձկանօք կը փնտոեն ու չեն կրնար գտնել : Երանի՛ այն կրից բռնութեանէն ազատողին :

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն**

**Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ի Թ Ի Ի Ն**

**Ի Ն Ա Խ Ա Վ Կ Ա Յ Ն**

**Ս Ո Ի Ր Բ Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս**

Առաջին պտուղ ծառոյն որ 'ի Գողգոթա .

ԸՆՈՐՀԱԼԻ

**Տ Ա Ղ**

Լու իմէ՛ ճշմարտութեան համր է՛ բարբառ .  
 Օ ի՛ ճառագայթք նորա յամեն յերկիր խոնարհ :  
 Ինքն 'ի կայս երանաւէտ արփի հորդեալ լուսալիր  
 Օ անբաւութեանց ունի ծոց զաստուածութեամբն պարագիր .  
     Երկինք 'ի նմա կենդանի  
     Լնմահութեանց բուն աղբիւր .  
     Լստեղք վառին գեղանի  
     Ի նրմանէ առեալ հիւռ : —  
 Իսկ ընդէր երկիր վարանի :  
 Դա կէտ մարդոյն հաստեալ երբեմն յաստուածուստ .  
 Երանական նըմին վայելք ելին անդուստ .

Շ ըլացան աչք երկրածին յակնապարար պատրանաց լոյս ,  
Իսկ որ յերկնից ցընցողկէր՝ միտք մերժեցան եւ ետուն խոյս .

Տարածեցաւ վարագոյր  
Սուժ ըզմըտօքըն նրսեմ ,  
Խաբեպատիր մոյն սընգոյր  
Ըխտից կարեաց բազմադէմ ,  
Գայթակղեալ ՚ի նոցին հրապոյր :

Թէ ոչ ՚ի դոյն երկնակարկառ ձեռք հըպին ,  
Ի ուսանորոգ թէ ոչ յօգի ձայն Ըրարչին  
“ Ելցէ լոյս ” , ըզձմարտին՝ ՚ի զուր ՚ի նա սուրբ նըշոյլ  
Սիտք ձրգնեսցին իմաստասէր՝ զոր երկնատուրն է , հեղուլ .

Սանգահարեալ հայելի  
Ոչ ցոլանայ անդրադարձ ,  
Ոչ ջուր պղտոր ծորելի  
Օ երկնից կապոյտ , գոյն արծարծ .  
Ոչ ըզսուրբըն միտք լըբենի :

Բ Ստեփանէ , խաբեախն ՚ի կրից է մարդ կոյր ,  
Օ ոգւոյն անանց ածեալ պարիսպ մահահամբոյր .  
Գու թէ զերկնից նըմին զուղի հորդես ՚ի բան լուսաւոր՝  
Երկնից անձուկ բայց շաւիղ . սա պիշ ՚ի լայնն անխոտոր .

Օ որ աւետես երկնալիր  
Նըմարտութիւն անըստուեր ,  
Երմին ոսոխ կայ երկիր .  
Եւ թընամանք բիւր եպեր  
Իբր ընդ սուտ բախին վրէժխնդիր :

Բ ստէպ ըզնա տեսին որդիք Սաղիմայ  
Կենացն ըզբան գեղուլ շըրթանցն ընդ ագուգայ .  
Երկնի կարօտք և որ երկրաւ՝ ՚ի նա յանշուշտ ձեռընտու  
Օ իւրեանց հոսել փութացան կարիսն ՚ի ձեռս աղերսարկու .

Եւ ոմն ՚ի սիրտ բըժըլկեալ ,  
Ըյլ ոք յախտից հեթեթանս ,  
Ի նըշանաց պակուցեալ ,  
Եւ առաքէր մեծ զարմանս  
Յոգին վեհ յերկնից հուր լուցեալ :

Ըյլ նախանձ յընկերին փառսըն հալեւմաշ  
Ի գով անուանըն խանդացաւ զարմանահրաշ .  
Եւ ՚ի փորձ հանդիսի յանկապտելին ըստուեր ածել ,  
Եւամ ՚ի նորուն խոնարհութիւն՝ ինքեան կոթող բարձր հարըստել .

Բայց ամաչեաց աղջամուղջ  
Ի ուսոյն հանդէպ երկնաւառ .  
Եւ կորակոր անշըշունջ  
Յանդիմանեալ գոլ խաւար ,  
Օ պրացաւ զի մուտ ՚ի պայքար :

Օ ի խռովայոյզ ծըփի տաճար տէրունի .  
Ընդ քահանայք և աւագաց դաս ծերունի ,  
Խորհուրդ ՚ի մէջ բեր արկցուք — գոչէ ընկեր առ ընկեր —

ԼՂԼ խորհուրդն այն մոլեգնութիւն , չէ զօրավիզ նոցա Տէր .

Օ ինրդ թըւի ձեզ , ո՛րք ,  
Պարիլեացւոյն պաշտօնեայդ .  
Բզհեա նորա գրնան փառք ,  
Սէրս 'ի կործան դիւրագայթ

Ի ըռեցին իբր ընդ հող անյայտ :

Ըհաւանիկ քարչի յատեան ըՍտեփանոս ,

Սինչ ըսփոփեալ զայրուոյն սրբէր աչս ուղխահոս .

Որ երբ 'ի գունդ ըզնա յանկարծ ետես պատեալ զէն և 'ի սուր :

Բզթերաքամ շրթունս անդրէն բանայր ողբոց 'ի հեծ տըխուր .

Ի այր և մանկիկ առ նովաւ

Իբրու բանին հետայոյզ .

Ու 'ի գիրկ ճեպեալ մօրն անձկաւ

Խառնէր արտօսը յարտասուս . . .

Ո՛վ կրկին որբ հայրակորոյս :

Իսկ նա յայնժամ դարձուցեալ զաչս իւր յայրին ,

Օ աչսն՝ զի ձեռք պընդեալ 'ի տուրն ձրգէին ,

Եւ յակնարկի 'ի հայրն հանուրց՝ զյուսոյն խարխիս անդ ցուցանէր :

Ինքն 'ի զրահ վառեալ ըզմիտըս յաներկիւղ Յիսուսին սեր

Քան 'ի սարիս երկաթից

Սիրտ իւր նովին վարակէր .

Եւ 'ի ձրգման շղթայից

Կոշկոճանօք չարավէր ,

Սիրելոյն մերձենալ թըւէր :

Ս ըսեմ նըմին կայր 'ի պատրաստ ասպարէզ ,

Հրեշտակք և Տէր խոնարհեալ յայս նախկին հանդէս .

Ուր թէպէտ հետք Յիսուսի գրծեալ անջինջ յարիւն կիտուած ,

ԼՂԼ աստուածեան զօրութիւն արտափայլէր անդ վեհասպանծ .

Ո՞ մահացուին 'ի դոյն փորձ

Երաշխաւօր յորդորիչ .

Բնութիւն տրկար և անփորձ

Ըշխարհի կիրք պատաղիճ .

Տեւեսցէ արդեօք սիրոյն բոց :

Յայս զըւարթնոց հանդիսատես հոգայր խումբ

Դէմք կէս 'ի ժմիտ եւ 'ի կասկած երկիւղին հուպ .

Սինչ նահատակ տերունոյն զըւարթ 'ի ճեման երկնաչու

Փութայր դիմել վաղահաս վըշտաց ընդ փորձ մահկանացու .

Իբրու երկիր ծարաւուտ ,

Կամ ազազուն լըքեալ տունի ,

Բսպասիցեն մօտալուտ

Յամպոց որոտ շառաչուկ

Ըռատահոսան ջուրց զեղմունք :

Տեսեալ իցէք զանդնդալիր մոլեալ ծով

Սինչ խուովայոյզ գոչէ 'ի մուռնչ բազմավրդով ,

Իբր ալք մըղէն զալիս զիրարելով կոհակք անբաւ .

Եոյն աստէն եւ 'ի Սաղիմ ամբօխք կուտին ընդ այն համբաւ ,

Յաւին ջերեալ նախանձու  
Օ օրհաս ճեպել անմեղին ,  
Յարիւնն 'ի քէն վրիժաու  
Սանաւորել զիմէին

Եղովուրդ և պետք խրմբովին :

Յատենի գահոյս արկեալ էր Մնա .

Յանցաւոր ոչ որ՝ դատախազ բիւրք առ նրմա .

Ոմն օրինացրն լուծիչ՝ զիւրն ըզսրբբոյն հեղար մեղանս .

Սա 'ի Սովսէս — այլ որ գոչէր — լուտայ յանդուգն ըզբամբասանս :

Ու երիցանց դաս անվաւեր ,

Որոց ձեռք դեռ ևս յարիւն

Լստուածորդւոյն արբեալ էր ,

Տիգօք աչօք ու 'ի շըչիւն

Շարժէին ըզգլուխն երերուն :

Լըսէս զոր սայք — կրրկնեաց Մնա — վըկայէն :

Լնց ընդ առաջը Ստեփանոս . եւ լըռութիւն կալաւ անդէն .

Ոչ զանձնէ , եղբարք եւ հարք , արժան ինձ կալ աստ անբասիր ,

Սինչ զինէն ամբաստանէն կրօն զոր ունիմն աստուածածիր .

Ում նահապետ յիղձն արծարծ ,

Պաւիթ յանձուկ եւ 'ի յոյս ,

Սովսէս կանուխ քարոզեաց՝

Ի զնոյն պաշտեմ ես չիտուս ,

Սահացուն վերբերիչ 'ի լոյս . . . :

Յայն անվէհեր բարբառ երկնից զարթեալ խինդ .

Լստուածութիւն նըշար 'ի նա ցօղեաց վըճիտ :

Յանմահից յանկարծ տեսիլ վերամբառնայր ըՍտեփանոս .

Լա շըլացումն 'ի միտս և յաչն առնթացաւ լուսոյն 'ի հոս .

Սա մարդ արգեօք . . զըւարթուն . .

Շուրթն առ ունկամբ հըծըծէր .

Օհարդ յանցեալ սա համբուն

Երկնից այսքան թէ հաճէր . . .

Ղմարտին վկայել որ չիշխէր :

Լա մինչ ըզշուրթն շարժելով հոգելըր

Օ եղոր ըզբան յոր սերովէն կայր 'ի յակճիւ .

Սինչ զՅիսուս ձայն ուրտացեալ երկնից կամարք կրրկնէին

Բարէ 'ի դոյն ոչ արձագանքս ապառաժ սիրտքն այն տային . . .

Պատառեաց անդ պատմուճան

Մնա անձին 'ի ծանակ .

Փենեհեսին գօլ նըման

Կարծէր յօրէնս նահատակ .

Լա զմահուն ճեպեաց աղաղակ :

Լա ոստեալ անդէն խուժան այսաբեկ .

Լա սուր քարանցրն շառաչէր խիտ երթևեկ .

Իբրու յամպոց զըզըրդիւն յամառնակէզ օդոց մղձկուտ

Ի շանթեռանդրն թօթափիւն ընդոստ 'ի դուղթ տրոփէ կարկուտ .

Լնկաւ 'ի գուճս հոգելին

Յետին 'ի ձօն աղօթից .

Եւ վերակնեաց ընդ երկին

Որ փեռեկէր ցընծալից ,

Ղեռ մարմնով կանխեալ վայելից :

Եւ Յիսուսին կողկողելով քաղցր 'ի տես

Քարանցն 'ի ձիգ յահուր՝ հալէր սիրտ սիրակէզ .

Եւ յոր երբեմն երկինք ու երկիր 'ի կառափման հընչեցին սար  
Րջնոյն նախ շուրթն հողեղէն աստ պաղատէր անյիշաչար .

Եւ զգարութեան ծածանեալ

Ենդ պարտեցաւ կշռոց մէտ .

Եւ գըթութիւն խնամակալ

Յաղթանակեաց անհանգէտ .

Եւ երկինք հիացան յաւէտ :

Յիսուս . . Յիսուս . . . յետին եղեն այս սիրոյն վանգ

Եւ ամփոփէր ըզգլուխն 'ի գիրկսն արիւններանգ .

Բնթացաւ որ պարմանի գոլ գործակից մահուան լըրիւ

Եւ արձակէր ըզձեռս 'ի բիբսըն խաւարել նըմին ըզտիւ .

Եւ յակնարկիս յայն վերջին

Սըլաք 'ի սիրտ իւր մըխէր .

Ղիմեաց հուր խինդ 'ի սըրտին

Ի խայթ թախիծ դարձ առնէր : —

Պաւղոսի այս ծընունդ լինէր :

Խ • Գ •

### ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

#### ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս ԻԱ . Օրէնք բաղկացութեան մարմնոց ԿԻԲ Բնաշուծական զուգաչափք :

Եթէ մետաղաց մետաղատիպ մարմնոց հետ ձեացուցած անհամար բաղկացու-  
թիւններն ալ քննելու ըլլանք՝ մի և նոյն սկզբունքը անոնց մէջ ալ կը գտնենք :

Ենչպէս պոտասիոնը թթուածնին հետ երկու բաղկացութի կ'ունենայ . այսպէս

Եթաթթուիկ պոտասիոնի . . . . .	Պոտասիոն	490,0
	Թթուածին	100,0
		<hr/>
		590,0
Եռաթթուիկ պոտասիոնի . . . . .	Պոտասիոն	490,0
	Թթուածին	300,0
		<hr/>
		790,0

Պոտասիոնը ծծմբոյ հետ հինգ ծծմբաւոր կը ձեւանայ , որոնց բաղկացութեան  
չափերն են .